

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/3

16 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Մարտին Սթար» ՍՊԸ ներկայացուցչի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.10.2015 թ-ի թիվ 0804 որոշման դեմ:

«Մարտին Սթար» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Մարտին Սթար» ՍՊԸ (այսուհետև նաև ընկերություն) 2015 թ-ի ապրիլ ամսին ՌԴ-ից Հայաստանի Հանրապետություն է ներմուծել արևածաղիկ: Ընկերության կողմից ներմուծման հարկային հայտարարագրեր է ներկայացվել խոշոր հարկ վճարողների ՀՏ (այսուհետև նաև տեսչություն): Վերջինիս կողմից բոլոր հայտարարագրերը կից փաստաթղթերով հաստատվել է և վերադարձվել են ընկերությանը: Մասնավորապես, ընկերությունը 20.05.2015 թ-ին թվով 7 հատ ներմուծման հարկային հայտարարագրեր է ներկայացրել ՀՏ: Նշված հայտարարագրերը վերաբերվում են ՌԴ-ից ՀՀ արևածաղիկ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառմամբ ներմուծելուն, իսկ տեսչությունը հաստատելով հայտարարագրերը, ընկերությանը ազատել է ԱԱՀ-ի վճարումից: Հաստատված օրինակները վերադարձվել են ընկերությանը, որը նշված վավերացված հայտարարագրի պատճենը ուղարկել է ՌԴ համապատասխան մարմին, որի հիման վրա ընկերությունը արևածաղիկը ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառմամբ ներմուծել է ՀՀ: Այստեղից հետևում է, որ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառմամբ ներմուծելու իրավունքը տրամադրվել է տեսչության կողմից: Այնուհետև տեսչությունից պահանջել են, որ նոր հայտարարագրեր ներկայացվի, նշելով, որ սխալ է թույլ տրվել: Որից հետո ընկերությունը 24.07.2015 թ-ին ներկայացրել է ճշտված ներմուծման հարկային հայտարարագրեր և կատարել է վճարումներ: Որից հետո տեսչությունը տեղեկացրել է, որ 1.501.432 ՀՀ դրամի չափով տույժեր են հաշվարկվել: 29.10.2015 թ-ին ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է թիվ 0804 որոշումը (այսուհետև նաև Որոշում), համաձայն որի ընկուրությունից ենթակա է գանձման 2.616.8 հազար դրամ, որի մեջ ներառված են նաև վերոգրյալ տույժերը: Որոշումը դիմողը ստացել է 02.11.2015 թ-ին, հետևապես որոշումը ուժի մեջ է մտել 03.11.2015 թ-ին:

Ընկերությունը գտնում է, որ 1.501.432 դրամի չափով տույժերի գանձման մասով որոշումն ակնհայտ անհիմն է, ստորև ներկայացված պատճառաբանություններով.

29.06.2001թ-ին ընդունված «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքի առաջին հոդվածի երկրորդ և երրորդ պարբերությունները սահմանում են. «Սույն հոդվածում նշված՝ ԱՏԳ ԱԱ 0602 10 100 0, 0701 10 000 0, 0713 10 100 0, 0713 33 100 0, 1001 91 100 0, 1001 91 200 0, 1003 10 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե նշված ապրանքները ներմուծվել են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Սույն հոդվածով սահմանված ցանկում ներմուծված «Ծածկագիրը ըստ ԱՏԳ ԱԱ-ի» 0105, 07 14 90 900, 2710 19 210, 2710 19 980 0 և 8702 ապրանքային դիրքերի մասով սույն հոդվածի դրույթները տարածվում են միայն այն ապրանքների վրա, որոնք նկարագրված են «Ապրանքի համառոտ անվանումը» սյունակում:

Սույն իրավանորմում հստակ նշվում է, որ «Ապրանքի համառոտ անվանումը» սյունակում նշված բոլոր ապրանքները ազատված են ԱԱՀ-ից, որը և հիմք է տվել ներկայացնելու հայտարարագիր ԱԱՀ-ից ազատման մասին:

17.12.2014 թ-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական Տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվառման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածը սահմանում է «1. «Անուղղակի հարկերի մասին արձանագրության 3-րդ և 4-րդ կետերի կիրառության իմաստով Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների օտարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառությունը և (կամ) ակցիզային հարկից ազատումը հիմնավորելու համար արտահանողն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում միայն հետևյալ փաստաթղթերը. 2) ... իսկ եթե ապրանքները ներմուծման պետությունում ձևակերպվում են «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով, ապա հայտարարության (հայտարարությունների ցանկի) փոխարեն արտահանողն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում ներմուծման պետության մաքսային մարմնի վավերացրած մաքսային հայտարարագրի պատճենը, որի համաձայն, ներմուծված ապրանքները ձևակերպվել են «Ազատ մաքսային գոտի կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով»:

Մաքսային միության անդամ երկրների հարկային մարմինների միջև վճարված անուղղակի հարկերի էլեկտրոնային տեսքով տեղեկատվության փոխանակման մասին արձանագրության 2-րդ հավելվածը կարգավորում է հայտարարության ձևը և մաքսային միության հարկային մարմինների պարտականությունները, մասնավորապես՝ 1-ին կետը սահմանում է. «Հայտարարությունը ներկայացվում է հարկ վճարողի կողմից (վճարողի կողմից) (այսուհետ հարկ վճարողը), հաշվառման վայրի հարկային մարմին թղթային կրիչի վրա չորս օրինակից և էլեկտրոնային տարբերակով:

Հայտարարության մեկ օրինակը մնում է հարկային մարմնում, երեք օրինակը նշումով վերադարձվում է հարկ վճարողին, հարկային մարմնի վճարումը հաստատող անուղղակի հարկերի ծավալով (ազատելը հարկման ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) ...: Հայտարարությունների երկու օրինակը հարկային մարմնի նշումով, հարկ վճարողի կողմից ենթակա է ուղղարկման մաքսային միության անդամ պետության հարկ վճարողին, որի տարածքից արտահանվել է ապրանքը, իրականացված ԱԱՀ-ն 0% տոկոսադրույքով (ազատման վերաբերյալ ակցիզով)»:

Նույն հավելվածի 6-րդ կետը սահմանում է «Տասն աշխատանքային օրվա ընթացքում դիմումի և փաստաթղթերի ներկայացման օրվանից, արձանագրությամբ նախատեսված կարգով անուղղակի հարկերի գանձման և մաքսային միությունում ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ վերահսկողության մեխանիզմները դրանց վճարման նկատմամբ, դիմումն ընդունած հարկային մարմնի պաշտոնատար անձը, պետք է այն քննարկի և հաստատի անուղղակի հարկերի վճարման փաստը (ազատման կամ այլ կերպ վճարելու), կամ էլ պատճառաբանված մերժել համապատասխան հաստատմամբ և կատարել համապատասխան նշումներ դիմումի երկրորդ բաժնում»:

Վերը նշվածից հետևում է, որ տեսչությունը ստանալով հայտարարագրերը տասնօրյա ժամկետում պետք է ստուգի օրենքին համապատասխանելությունը, որից հետո եթե համապատասխանում է օրենքին հաստատի և երեք օրինակը վերադարձնի հայտարարագիրը ներկայացնողին, իսկ եթե չի համապատասխանում, ապա պատճառաբանված մերժի հայտարարագրի հաստատումը: Այստեղից հետևում է, որ տեսչության աշխատակցի (հետևապես տեսչության) մեղքով է վերը նշված տույժերը

առաջացել. հետևապես սույն դեպքում առաջ է գալիս վարչական մարմնի առաջախնայողության հարցը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 8-րդ և 37-րդ հոդվածների համաձայն վարչական մարմինը պետք է ղեկավարվի բացառապես օրենքով, պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների ճազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, որը վարչական մարմնի կողմից չի կատարվել, քանի որ վարչական մարմնի գործողությունները ուղղված են եղել զուտ գումար գանձելուն, այլ ոչ թե փաստական հանգամանքների բացահայտմանը և իրավաչափ որոշում կայացնելուն:

Վերոնշյալի հիման վրա գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել 29.10.2015 թ-ին ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից կայացված թիվ 0804 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Մարտին Սթար» ՍՊԸ կողմից Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել արևածաղիկի սերմեր (ԱՏԳ ԱԱ 1206009900), որոնց մասով հարկային տեսչություն են ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագրեր, առանց ԱԱՀ-ի վերաբերյալ գումարը նշելու: Նույն ապրանքների մասով հարկային տեսչություն ներկայացված ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման հայտարարության 18-րդ սյունակում նշվել է «Արտոնություն»:

«Մարտին Սթար» ՍՊԸ կողմից Ռուսաստանի Դաշնությունից արևածաղիկի սերմերի (ԱՏԳ ԱԱ 1206009900) ներմուծումը ԱԱՀ-ից ազատված լինելու հարցը պարզաբանելու նպատակով հարկային տեսչության կողմից հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Ստացված պատասխան գրության համաձայն, ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների մասով կիրառելի են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքի դրույթները: Օրենքով հաստատված ցանկում ներառված է ԱՏԳ ԱԱ դասակարգչի 12 խումբը, բացառությամբ այդ խմբի 1201, 1202, 1206 00, 1208, 1210, 1211 և 1212 ապրանքային դիրքերում ներառված ապրանքների և այդ ապրանքների ներմուծման մասով հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար ԱՏԳ ԱԱ դասակարգչի 1206009900 ծածկագրին դասվող ապրանքների ներմուծման համար հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ հարկային տեսչությունն ընկերությանը գրությամբ առաջարկել է ներկայացնել ճշտված ներմուծման հարկային հայտարարագրեր: Ընկերության կողմից ներկայացվել են ճշտված ներմուծման հարկային հայտարարագրերը և վճարվել են համապատասխան ԱԱՀ-ի գումարները: Հարկային տեսչության կողմից սահմանված ժամկետում ԱԱՀ-ի չվճարելու համար հաշվարկվել է տույժեր՝ գումարով 1.501.432 դրամի չափով:

Քննարկվող դեպքում հարկային տեսչությունը, ուսումնասիրելով ընկերության կողմից վերոգրյալ ապրանքատեսչակի մասով հարկային տեսչություն ներկայացված

ներմուծման հարկային հայտարարագրերը, պարզել է, որ դրանցում ԱԱՀ-ի գումարներ նշված չեն, այն դեպքում, երբ նույն ապրանքատեսակի մասով մինչ այդ հարկային տեսչություն ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերում նշվել են համապատասխան չափի ԱԱՀ-ի գումարները: Տեղի ունեցածի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար հարկային տեսչության աշխատակիցը մինչև «Ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման վերաբերյալ հայտարարությունները» հաստատելը հեռախոսակապի միջոցով կապ է հաստատել ընկերության հաշվապահությունը վարող «ԷՄ ԷՅՁ ՓԻ Քոնսալթինգ» ՍՊԸ տնօրեն Հ.Համբարյանի հետ և տեղեկացրել է վերոգրյալ խնդրի մասին: Սակայն, վերջինս հայտնել է, որ ներմուծման հարկային հայտարարագրերում և հայտարարություններում արտացոլված տվյալները ճիշտ են և բխում են ՀՀ օրենսդրության պահանջներից: Բացի այդ, հարկային տեսչությունը ներմուծման հարկային հայտարարագրերը սխալ կազմված լինելու և ճշտված հայտարարագրեր ներկայացվելու անհրաժեշտության մասին ընկերությանը տեղեկացնելուց հետո, ճշտված հայտարարագրերը վերջինիս կողմից ներկայացվել են միայն 40 օր հետո:

Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ վերոգրյալ փաստական հանգամանքների մասին տեղեկացված չի եղել:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված է ընդհանուր դրույթ, որի համաձայն հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հարկային տեսչության կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ ընկերության կողմից թույլ տրված սխալը վերջինիս կողմից ժամանակին շտկելու, հետևապես նաև ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններից ձեռնպահ պահելու ուղղությամբ, սակայն վերջինիս կողմից համապատասխան միջոցները ձեռնարկվել են ուշացումով: Այսինքն, սահմանված ժամկետում վերոգրյալ ներմուծումների մասով ԱԱՀ-ի գումարները չվճարելու համար տույժերի հաշվարկման մեջ, հարկային տեսչության մեղքը բացակայում է:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.10.2015 թ-ի թիվ 0804 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ